ՔԱՂՎԱԾՔ

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 12.02.2021թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Ք. Վանաձոր Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Մամիկոն Ասլանյանը:

Մասնակցում էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Հայկազ Մովսիսյանը, Խորեն Վարդանյանը, Արտյոմ Գրիգորյանը, Դավիթ Սիմոնյանը, Սոխակ Մելքոնյանը, Արման Ափինյանը, Գայանե Քալանթարյանը, Վահագն Ավագյանը:

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արկադի Փելեշյանը, Կարեն Դավթյանը:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Հայկազ Սիմիկյանը, Կարինե Ղուկասյանը, Անահիտ Կարապետյանը, Արման Սիրադեղյանը, Վահե Կռոյանը, Ռոմիկ Մարգարյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու անդամներ՝

Մարիամ Ապերյանը, Դավիթ Հակոբյանը, Հրաչիկ Ղամբարյանը:

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արևիկ Լոքյանը, Սեյրան Աղաբեկյանը:

Նիստից բացակայում էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Սեյրան Ղամբարյանը, Մարինե Հովհաննիսյանը, Վահե Դոխոյանը, Արման Սարգսյանը:

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արեն Խաչատրյանը, Տիգրան Նազարյանը, Հասմիկ Խլոպուզյանը:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Քրիստ Մարուքյանը, Սուրեն Կարապետյանը, Արմեն Ավետյանը, Կարեն Բեկչյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյանը, համայնքապետարանի պատասխանատու պաշտոնյաներ, ստորաբաժանումների ղեկավարներ ինչպես նաև ՁԼՄ-ների ներկայացուցիչներ:

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Մամիկոն Ասլանյանը ժամը 11.05-ին նիստը հայտարարեց բացված: Նիստին ներկա էին ավագանու 22 անդամներ:

(Վանաձորի ավագանու 2021 թվականի 12.02.2021 ավագանու հերթական նիստի տեսաձայնագրությունն ամբողջությամբ առկա է համայնքապետարանի պաշտոնական կայքում):
Մինչ օրակարգի քվեարկությունը ավագանու անդամ Վ.Կռոյանը առաջարկեց օրակարգից հանել

10-րդ հարցը /Վանաձոր քաղաքի Աբովյան փողոցի թիվ 1/4-1 հասցեում գտնվող գրասենյակը «Բոլոր քար» համատիրությանը նվիրատվությամբ հանձնելուն համաձայնություն տալու մասին/:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախապես ներկայացված որոշման նախագծերով օրակարգը:

Կողմ՝ 13, դեմ՝ 9 /Կ.Ղուկասյան, Ա.Սիրադեղյան, Հ.Սիմիկյան, Վ.Կռոյան, Ա.Կարապետյան, Ռ.Մարգարյան, Մ.Ապերյան, Հ.Ղամբարյան, Դ.Հակոբյան/, ընդունվեց որոշում:
Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց նախապես ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգ՝

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 123-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. Վ.Գրիգորյան

2.Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման փաստաթղթերի հաստատման մասին

զեկ. Վ.Գրիգորյան

3.Արտաբյուջետային հաշիվ բացելու թույլտվություն տալու մասին

զեկ. Վ.Գրիգորյան

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 143 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ.Ա.Օհանյան

5.Վանաձոր համայնքի ղեկավար Մամիկոն Ասլանյանին լիազորելու վերաբերյալ

զեկ. Լ.Դավթյան

6.Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 146 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. Գ.Բաղյան

7.Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

զեկ.Ս.Աբովյան

8.Վանաձոր համայնքի վարչական սահմաններում՝ Խնձորուտ 2-րդ փողոց թիվ 25 հասցեում գտնվող 06-001-1030-0048 ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

զեկ.Ս.Աբովյան

9.Վանաձոր քաղաքի Աբովյան փողոցի թիվ 1/4-1 հասցեում գտնվող գրասենյակը «Բոլոր քար» համատիրությանը նվիրատվությամբ հանձնելուն համաձայնություն տալու մասին

զեկ. Ս.Աբովյան

10.Վանաձոր քաղաքի Կ.Դեմիրճյան փողոցի թիվ 25/2-1 հասցեում գտնվող հողամասը «Կարեն Վարդանյան»-ի անվան կրթական հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին

զեկ. Ս.Աբովյան

11. Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

զեկ. Մ. Ասլանյան

ԸՆԹԱՑՔԸ՝

Մինչ 2-րդ հարցի զեկուցելը, ավագանու անդամ Ս.Ղամբարյանը ներկայացավ նիստին:

1.ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 123-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Հարցի քննարկման ընթացքում ավագանու անդամ Ա.Կարապետյանը դուրս էր եկել նիստերի դահլիճից:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 22, ընդունվեց որոշում:

2. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման փաստաթղթերի հաստատման մասին:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը:

Հարցի քննարկման ընթացքում նիստին ներկայացան ավագանու անդամներ Վահե Դոխոյանը և Մարինե Հովհաննիսյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 20, ձեռնպահ՝ 5 /Վ.Կոռյան, Ա.Կարապետյան, Մ.Ապերյան, Հ.Ղամբարյան, Դ.Հակոբյան/, ընդունվեց որոշում:

3. ԼՍԵՑԻՆ- Արտաբյուջետային հաշիվ բացելու թույլտվություն տալու մասին:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 25, ընդունվեց որոշում:

4. **ԼՍԵՑԻՆ** - Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 143 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 21, դեմ՝ 3 /Մ.Ապերյան, Հ.Ղամբարյան, Դ.Հակոբյան/, ձեռնպահ՝ 1 /Ռ.Մարգարյան/, ընդունվեց որոշում:

5.**ԼՍԵՑԻՆ**- Վանաձոր համայնքի ղեկավար Մամիկոն Ասլանյանին լիազորելու վերաբերյալ:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լիլյա Դավթյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ: Հարցի քննարկման ընթացքում ավագանու անդամ Հ.Մովսիսյանը դուրս էր եկել նիստերի դահլիճից:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 24, ընդունվեց որոշում:

6. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 146 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և զբոսաշրջության հարցերի բաժնի պետի տեղակալ Քրիստինե Մադոյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ: Հարցի քննարկման ընթացքում համայնքի ղեկավար Մ.Ասլանյանը և ավագանու անդամ Հ.Մովսիսյանը դուրս էին եկել նիստերի դահլիճից:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 24, ընդունվեց որոշում:

7. ԼՍԵՑԻՆ- Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Հարցի քննարկման ընթացքում ավագանու անդամներ Հ.Մովսիսյանը և Ա.Գրիգորյանը ներկա չէին նիստերի դահլիճում:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 23, ընդունվեց որոշում:

8. **ԼՍԵՑԻՆ** - Վանաձոր համայնքի վարչական սահմաններում՝ Խնձորուտ 2-րդ փողոց թիվ 25 հասցեում գտնվող 06-001-1030-0048 ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, դեմ՝ 18 /Գ.Քալանթարյան, Մ.Հովհաննիսյան, Դ.Սիմոնյան, Վ,Ավագյան, Ա.Ափինյան, Վ.Դոխոյան, Կ.Դավթյան, Ա.Լոքյան, Ս.Աղաբեկյան, Կ.Ղուկասյան, Ա.Սիրադեղյան, Հ.Սիմիկյան, Վ.Կոռյան, Ա.Կարապետյան, Ռ.Մարգարյան, Մ.Ապերյան, Հ.Ղամբարյան, Դ.Հակոբյան/ ձեռնպահ՝ 4 /Ս. Մելքոնյան, Ա.Գրիգորյան, Ս.Ղամբարյան, Խ.Վարդանյան, Հ.Մովսիսյան/, չընդունվեց որոշում:

9. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր քաղաքի Աբովյան փողոցի թիվ 1/4-1 հասցեում գտնվող գրասենյակը «Բոլոր քար» համատիրությանը նվիրատվությամբ հանձնելուն համաձայնություն տալու մասին:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Հարցի քննարկման ընթացքում ավագանու անդամ Խ.Վարդանյանը ներկա չէր նիստերի դահլիճում, իսկ Ս. Մելքոնյանը քվեարկությանը չմասնակցեց:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 13, դեմ՝ 9 /Գ.Քալանթարյան, Ս.Ղամբարյան, Ա.Սիրադեղյան, Հ.Սիմիկյան, Վ.Կոռյան, Ա.Կարապետյան, Մ.Ապերյան, Հ.Ղամբարյան, Դ.Հակոբյան/ ձեռնպահ՝ 1 /Ռ.Մարգարյան/, ընդունվեց որոշում:

10. ԼՍԵՑԻՆ Վանաձոր քաղաքի Կ.Դեմիրճյան փողոցի թիվ 25/2-1 հասցեում գտնվող հողամասը «Կարեն Վարդանյան»-ի անվան կրթական հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Հարցի քննարկման ընթացքում ավագանու անդամ Խ.Վարդանյանը ներկա չէր նիստերի դահլիճում:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 24, ընդունվեց որոշում:

11. ԼՍԵՑԻՆ - Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2021 թվականի մարտի 19-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 24, ընդունվեց որոշում:

Վանաձորի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2021 թվականի մարտի 19-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 11:00-ն:

ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆԸ

Արձանագրությունը կազմեց Հ. Զարմանյանը